

Օ Ա Ղ Ի Կ

ՄԱՆԿԱԳԻՐ

ՀԱՐԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Դաստիարակութեան եւ Կրթութեան

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՅՑ կը հրատարակուի առեն ուրբար օր, իքաց առեալ ջունիս եւ Յուլիս ամիսները՝ Բամանորդագինն է ԿԱՆԴԻԿ. Պօլսոյ եւ զաւառաց համար, տարեկան 50 դամեկան . վեցամսեայ 25 դամեկան, Եռամսեայ 15 դամեկան. Այլ Երկրաց համար 42 ժամե. Խրաբանշիլք թիւր կ'արձէ 50 փառա. Գաւառներէն դրույթուղթ ալ կ'ընթունոչի, Բամանորդագրութեան համար դիմել առ Տօնօրէն-Խմբագիր Միհրան Ալեքսանդ, Էսլի Զապրիէ հաստէսի թիւ 61. Նևոն Կ. Պերպէրեանի տպարանը.

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

100 618 488

U P C O 9 B 7 9 U S W O H G E R M A N Y

三三三

804 U.S.A.

Ուսուցիչ. — Յովսէփին պատմութիւնը
պատմէ :

Աւակիերս
Ուս . Արդէն շատ անգամ կարդացած
ենք Յովսէփին պատմութիւնը, բայց կըր-
նանք լսուսուզանիլ թէ միշտ նոր լսանդա-
զատանօք կարդացած ենք զայն : Այս պատ-
մութիւնը Հին կտակարանին ամենէն գե-
ղեցիկ, և ամենէն սրտաշար՝ մասերէն մին
չէ : Ո՞վ չյուզուիր տեսնելով այնչափ բարի,
այնչափ առաքինի տղայ մը, զոհ եղած իր
եղբայրներուն նախանձուն . կը մատնուի
սոսկալի մահուան մը, յետոյ կ'ազատի այդ-
մահէն գորովագութ հօրմէ մը հեռանալու
և, իբրև գերի, օտար երկրի մը փրայ տպ-
րելու համար . հոն, յանիրաւի հալածուած,

կ'ազդատի այս կարծատես նուաստութենէն
ըլլալու համար Եգիպտոսի ամենէն մեծ իշ-
խանը . իր վրայ կը փայլեցնէ միշտ ամե-
նէն ազնիւ առաքինութիւնները թէ՛ բան-
տի մը մէջ և թէ՛ գահու մը վրայ :

ի՞նչ գեղեցիկ կեանք . երանի , զաւակս ,
անոնց որ Յովսէփին պէս իրենց մանկու-
թիւնը կ'անցնեն անմեղութեան մէջ , և ի-
րենց չափահասութիւնը՝ ծառայելով Աս-
տուծոյ , իրենց ընտանեաց և հայրենեաց .
այնպիսիք կը պատրաստեն իրենց համար
պատուաւոր և խաղաղ ծերութիւն մը , և
կրնան վստահութեամբ սպասել Աստուծմէ-
այն վարձատրութեան որ որոշուած է ա-
ռաքինութեան :

Ահա զուտակս, կը տեսնես տղայ մը ում
կ'սպառնար մահն, օտարներուն ծախուած,
հայր մը մեծ վշտի մէջ ինկած և խլճնի խայ-
թէ տանջուած յանցաւորներ: Ո՞վ է այս-
քան չարեաց պատճառը:

Ա. Նախանձն է, այն մոլութիւնը որ
անմեղ Աբելին արիւնը թափել տուաւ :

Աւս. Եթէ քու ընկերներուգ մէջ, զա-
ւակս, քեզմէ աւելի հարուստներ գտնուին,
կամ քեզմէ աւելի յաւաջադէմ, զգուշա-
ցի՛ր նախանձոտ աչքով անոնց նայելու.,

(1) S^{ku} βh_L 9 .

ընդհանրակը դու ալ ուրախ և երջանիկ եղիր անոնց պէս։ Սրտի մը մէջ մտած նախանձը կը նմանի հողին մէջ նետուած հատիկին։ կը բողբոջի նա, միշտ կ'ածի առանց նշմարուելու, և վերջապէս կը խեղդէ ամէն լաւ զգացումները։ Նախանձը ի'նչ չարիք յառաջ չէ բերած մարդոց մէջ։ Նախանձով սիրելագոյն բարեկամութիւնը կը փոխուի երբեմն ատելութեան, բարեկամները կ'ըլլան թշնամի և եղբայրները՝ հակառակորդ։

Յովսէփի բանտը նետուած էր յանցանքի մը համար զոր չէր գործած։ կը գթա՞ք իր վրայ։

Ա. Ո՛չ, որովհետեւ անմեղ առաքինութիւնը աւելի երջանիկ է քան յաղթող մոլութիւնը։ Աստուած առանց մխիթարութեան չժողովուր զանոնք որոնք կը առաւապին յանիրաւի, և վաղ կամ անագան անմեղութիւնը երեւան կը հանէ։

Ուս. Ի՞նչ խորհիլ կուտան քեզ այն փորձութիւնները զորս Աստուած կրել տուաւ Յովսէփին։

Ա. Սա կը խորհիմ որ ի'նչ վիշտ ալ հասնի մեզ, պէտք չէ որ յուսահատինք Աստուածոյ բարութենէն։ Նա կը վարէ բոլոր դէպերը և յաճախ մեր օգտին կը ծառացէցընէ այն իրերը որոնք մեր երջանկութեանը շատ աննպաստ կ'երեւան։

Ուս. Հեղինակ մը կ'ըսէ։ Աստուած խոնարհեցնելով և առաւապեցնելով Յովսէփը, կ'ուզէր ազատ կեցնել իւր առագայ մեծութեանց մոլութիւններին, և սորվեցնել անոր, իւր թշուառութեամբն իսկ, միշտ կարեկից ըլլալ այլոց։

Յովսէփի ներկայացնելով իր հայրը Փարաւոն թագաւորին, չվարանիր ըսելու անոր թէ իւր հայրը հովիւ է, թէպէտ և գիտէ թէ եգիստացիք կ'անարդեն այս արհեստը։ Ի՞նչ օրինակ կ'ուտայ քեզ այս պարագային մէջ։

Ա. Յովսէփ մեզ կը սովորեցնէ որ երեք չամչնանք մեր ծնողաց նուաստ վիճակին։

Ուս. Միտքը պահէ, զաւակս, որ ամենէն ջնջին արհեստը երր պատուով և ուզդութեամբ ի գործ կը դրուի, այնքան յարդելի է որքան թագաւորի մը տուած առաջնակարգ աստիճանները։ Քանի՞ քանի անգամներ տեսնուած են որդիներ որոց ծնողը մեծամեծ զոհողութիւններ ըրած


են որպէս զի օգտակար տնդամ մը ընեն զիրենք մարդկային ընկերութեան մէջ, քանի՞ քանի՞ անդամներ, կ'ըսեմ, այս որդիք, երբ մեծ դիրքի մը հասած են, անարդած արհամարհած են իրենց ծնողքը, զգուշացած են անոնց ընկերութեան մէջ գտնուելէ և ամօթ համարուծ են իրենց ծագումը։ Զըլլայ որ տյսպիսի յանցանք մը գործես, զաւակս, տկար մոքի և յուի սրտի նշան է այն։

Յակոբ խնդրած էր որ իր մահուանէն ետքը, իր մարմինը Քանանու երկիրը տարուի։ Յովսէփի հաւատարմութեամբ կը կատարէ իր հօրը կամքը։ Եզրակացութիւնը մը հանէ՛ աստի։

Ա. Ողելարներուն վերջին կամքը նուիրական ըլլալու է մեզ։ պարտիմք բարեպաշտութեամբ կատարել իրենց փափաքները։

Կ. Մ. ԱՍՔԱՆԱԶ

Հետեւղաբետամբ Օհորդ Ժիւանվիլի



ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ (1)

ԵՐՐՈՐԴ ԽԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԽԵՂՋԷ ՊԼԱՄ Է ՉԵԶԵԼ

Խիստ մաքուր, բնածխական թթուէ աղաս օդ չնչել, ահա՛ առաջին պայմանն առողջութեան։

Բայց ի՞նչ կերպով կարելի է կատարեալ մաքրութեան մէջ պահել մթնոլորտն յորում կ'ապրիմք։

Մարդ մը մէկ ժամէն կ'արտադրէ և կ'արձակէ գրեթէ տան եւ վեց լիոր բնածխական թթու։ Միւս կողմանէ, ներհուն տարրարանք ապացուցած են որ այս տասնեւվեց լիոր բնածխական թթուն կը բաւէ ապականել, թունաւորել տասը խորանարդ մեղր օդ։ Հետեւաբար, որպէս զի մթնոլորտ միշտ առողջարար մնայ, պէտք է որ ժամէ ժամ տասը խորանարդ մեղր օդ նորոգի մէկ անձի համար։ Այս է ահա հակիրճ ու խիստ կանոնն զոր առողջաբանութիւնը կուտայ մեզ և զոր պարտիմք յարգել խորանարդ, եթէ կարեւորութիւն կ'ընծայեմք առողջութեան։

(1) Տես թիւ 7.

— Բայց, պիտի ըսէք, շատ խատապահանջէ ձեր առողջաբանութիւն, և, մեծահարուստ մարդիկ, ապարանաց բնակիչք միայն պիտի կրնային հետեւիլ նուա:

Ենթադրեմք թէ խնդիրը ննջառենեկի մը վրայ է: Երեկոյին, ժամը 3ին կը մտնեմք ներս: առաւօտուուն ժամը 4ին կ'ելնեմք դուրս: 8 ժամ անցուցած կը լինիմք ննջառենեկին մէջ: Պէտք էր ուրեմն որ 8 անգամ 10 խորանարդ մեդր օդ պարունակէր այն: այսինքն $8 \times 10 = 80$ խորանարդ մեդր պարունակ ունենար ննջառենեակս: Եւ այս հաջիւ դեռ մէկ անձի համար է: Եւ եթէ երկու, երեք անձեր պատկէին հոն, ինչպէս կը պատահի յաճախ, այն ատեն այլ եւս չը պիտի բառէր 80 խորանարդ մեդր: այլ 160, 240 խորանարդ մեդր պարունակ պէտք էր ունենար, այսինքն պէտք էր որ շտեմարանի մը չափ ընդարձակ լինէր: Անկարելի էր այս: Երբ սենեկի մը կողմերը կ'ամ 5 մեդը են և բարձրութիւնը՝ $2\frac{1}{2}$ մեդր, արդէն չափաւոր կոկիլ սենեկի մը կը համարուի: Շատ մարդիկ կան որոց սենեկաներն նոյն իսկ ասկէ աւելի նեղ են:

— Այդ բանն իրաւ է, աղաքս: Մեր սենեկաներն ընդհանրապէս 40—50 խորանարդ մեդր պարունակ ունին, և յաճախ մէկէ աւելի անձեր կը բնակին հոն: Բայց նեղ սենեկի մը մէջ մաքուր օդ չնշելու և տղեւոյն անձկութիւնը համակշռելու համար միջոց մը կայ:

Այս միջոցն է, ինչպէս կրնաք գուշակել, օդոյ նորոգութիւն, կամ բուն բառով, օդափոխութիւն:

Սենեկի մը օդը փոխել կուգէք. — Անդադար նորոգեցէք անոր պարունակած օդը, դուրս վանեցէք գործածուածն և նոր օդ բերէք տեղը:

Եւ ի՞նչ կերպով կատարելու է ներքին օդոյ սոյն մշտառեւ նորոգումը:

Առ այս պէտք է պարզապէս սենեկին օդը հալորդակցութեան մէջ դնել արտաքին մթնոլորտին հետ:

Ծխան մը, երբ վառուած է, օդափոխութեան պատուական գործի մը կը դառնայ: Անդադար կը քաշէ սենեկին օդը, կը տաքցունէ զայն և ծուխին հետ դուրս կ'արձակէ: Դուրս ելնող այս տաք օդոյ հստանքին տեղը լեցնելու համար, դրսի ցուրտ ու մաքուր օդն ամէն կողմէ ներս կը վազէ, պա-

տուհանաց յօդուածներէն, դրանց անջրալետներէն, տախտակամածին ծերպերէն. այնպէս որ վառ ծխան մը անդադար կը քաշէ դուրսի մաքուր օդն և այսպէս կը փոխէ սենեկին օդը:

Երբ ծխանը վառ չլինի, օդը ներս չքաշուիր. սակայն սենեկին չնչուած ու անմաքուր օդը կրնայ՝ խողովակին միջոցաւ դարձեալ հալորդակցիլ արտաքին մթնոլորտին հետ, և միշտ աւելի լաւ է որ օդափոխութիւնն գէթ այս միջոցաւ ըլլայ քան թէ բնակ' չըլլայ:

Ահա ասս'ր համար է որ լաւ ննջառենեակ մը պարտի միշտ ունենալ ծխան, նոյնպէս ասս'ր համար է որ պէտք չէ սպյն ծխանին խուփը փակել ամառ ատեն, ինչպէս կը փակեն շատեր:

Բայց ծխան մը, ինչ որ ալ լինի, այն ատեն միայն կը նորոգէ ըստ բաւականին օդ երբ վառ լինի, և միշտ կարելի չէ վառ պահել զայն: Որչափ մարդիկ երբէք չեն վառեր ծխան: Որչափ մարդիկ ալ նոյն իսկ ծխան չունին իւրեանց սենեկաց մէջ:

Ուրեմն պէտք է ուրիշ բան մը, օդափոխութեան ուրիշ միջոց մը փնտուել:

Դժուարին բան մը չէ այդ միջոցը գործադրել: Կը բաւէ որ ծակ մը բանամք տեղ մը պատին վրայ կամ պատուհանին մէկ ապակւոյն վրայ, այնպէս որ օդը, առողջարար մաքուր օդը որ դուրսն է, կարող ըլլայ միշտ ներս մտնել և մեր արդէն չնշած օդին տեղը լեցունել:

Այս ծակը պէտք է բանալ միշտ առատապին մօտ, որպէս զի, գիշեր ատեն, ցուրտ օդոյ հոսանքը՝ փոխանակ երթալուղջակի քնացողին զարնելու, բաղիսի առաստաղին, պատառածե բեկանի անոր դէմ և կամաց կամաց վար իջնէ:

Փօխանակ պարզ ծակ մը բանալու, աւելի լաւ է, եթէ հնար լինի, պատուհանին վերին ապակիներէն միոյն տեղ բեւնակ մը դնել: Գիտէք դուք թէ ի՞նչ է թեհակը: Մեր գասարանին պատուհանք ունին թեհակ: Տեսակ մը փոքրիկ վերնադուռ (Ա. Փէ. Բ) է որ դէմ և վեր կը բացուի և որոյ բացուածքն կը փոփոխի ըստ կամս: Այդ կերպով, կարելի կը լինի ըստ պիտ յիշ յաւելու կամ նուազեցնել մաքուր օդոյ հոսանքը:

Երբ սենեկին մէջ մէկէ աւելի անձինք կը պառկին, բոլորովին կը բանան վերնադու-

ուը . եթէ մէկ անձ մը կը պառկի , բաւական
կը համարին կիսարաց թողուլ :

կը տեսնէք , տղաքս , որ եթէ անմաքուր
օդ ծծելու վտանգը սոսկալի է , այս վտան-
գէն խոյս տալն է խստ դիւրին : Հարուստն
իւր տպարանքին մէջ , աղքատն իւր խրճի-
թին մէջ կրնան հաւասարապէս վայելել
մաքուր ու առատ օդ : Ո՞չ ստակ և ո՞չ նե .
զութիւն պէտք է պատին մէջ կոմ ապակ-
ւոյն վրայ ծակ մը բանալու համար :

(Շարունակելի)

Գ. Ա. ՄԱԼԱԹՍԱՆ

ՄԻԶԻՆ ԸՆԹԱՑՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

ՀԱՐԻԿԻ ԲԱՅԵՐ

(Տես թիւ 3)

2. ԱՄԲԱՌՆԱԼ

ԱՄԲԱՌՆԱՄ , բարձի , բա՛րձ . ներգ . Վեր
վերցնել , վեր հանել : Ամբարձ զաշս իւր եւ
ետես : Ս. Դիրք :

— բարձայ , ձիր . չէզ : Բարձրանալ . վեր
ելնել : Ամբարձան մինչև յաստեղս : Ս. Դիրք :

ԱՅՍ ԲԱՅՈՎ , ՇԻՆՈՒԱԾ ՈՃԵՐ

զԴԼՈՒԽ , զձեռս ամբառնալ . զլուխ վեր-
ցնել , յանդզնիլ

Դէտակն ի վեր — . վեր նայիլ

Ծղիս ի վեր — . քեւերը սորտել , սորտուիլ :

3. ԱՆԿԱՆԵԼ

ԱՆԿԱՆԻՄ , անկայ , անկիր . չէզ : իյնալ
կործանիլ :

Անկցի ի գուր առիւծուց : Անկաւ պա-
րխապն շուրջանակի : Ս. Դիրք :

— (յոք) . Ապաւինիլ , դիմել : Անկեալ էր
և Շիմն ի նոսա : Ս. Դիրք :

— . Իյնալ , վերաբերիլ : Տուր ինձ բաժին
որ անկանի յընչիցդ : Ս. Դիրք :

— . Մեռնիլ , մանաւանդ պատերազմի մէջ :
Անկանէին ի հեթանոսաց անտի երեք հա-
զար վառեալք : Ս. Դիրք :

— . Յարձակիլ , վրան հասնիլ , պատել . Ե-
կին և անկան զբանակաւն այլազգեացն :
Անկաւ ահ ի վերայ նորա : Անկաւ նմա-
քուն ծանր թանձրամած : Զձեսք այնպէս
ամպ մթագին անկաւ : Ս. Դիրք :

— . Դրուիլ : պատահիլ : Յօրէ յայդմանէ
յորում անկաւ հիմն տաճարիդ : Աթոռք
անկանէին , և հիմնաւուրցն նատէր : Ս. Դիրք :
Զանկաւ օշնան ի ձեռս վիավկասուն կա-
նանց : Ելիշէ :

— (յիմեքէ) . Բանէ մը զրկուիլ . զայն
կրտսենել : Անկանէլ յընչից , ի կենաց կամ
յարեէ , ի պատուոյ , ի մոտոց ևն . կը նշա-
նակէ ինչքը , կեանքը , պատիւը , իւելքը
ևն . կորսունցնել :

ԱՅՍ ԲԱՅՈՎ , ՇԻՆՈՒԱԾ ՈՃԵՐ

Ըստ Ակն անկանէլ . աշբէն աներեւոյր
ըլալ :

յԱկն — (ումեք) . աշբին երեւալ

յԱղերս — (ումեք) . աղաչել

յԱղօթու . աղաչել

ընդ Անձն . — (ումեք) . զիրկը նետուիլ

զԱռաջեւք — . դէմը , առջեւը ելել

ըստ Արտուղի կամ զարտուղի — . մոլորիլ
զԲանիւք — (ընդ ումեք) . խօսի բըռ-
նուիլ

ի Բուռն . բոնուիլ , ձեռք իյնալ .

ի Գաղտագողօնս — . գողի պէս ծածուկ
տեղեր պահութիլ

զԴինեօք — . զինովնալ

ի Գուճս . ծերադրել

Դիտապաստ . մեռնիլ , գետինը փոռուիլ .

յԵղուկս . զորովաշարժ եւ խղնալի
կերպով խօսիլ

ի Զնին . զննել , քննել

զԹիկամք — (ուրուք) . ետեւէն իյնալ , հալա-
ծել

ի Թիւ , ընդ թիւ , ընդ թուով — . համ-
րուիլ , հաշուուիլ

ի Խանաթ . միատեղ երբալ

ի Խնդիր — (իմիք) . փնտուել , խուզարկել

ի Խոյզ և ի Խնդիր — . (իրիք) . փնտուել

ի Կիրթ . ետեւէն իյնալ , զանալ

կործան . կործանիլ

ի Ճանասլարհ . ճամբայ իյնալ

ընդ Միմեանս — . իւարու հետ կոռուիլ

ի Միսու կամ զմոօք — . միտքը իյնալ ,

մտէն անցնիլ

ի Մոռացումն . Մոռցուիլ

ի Նեղ— . Նեղը իյնալ
յթշ— . անհոգ ըլլալ, (եան) գալ
յթղոք— (ումեք). ադաշել պազատիլ
յթւղի— . ճամբայ իյնալ
Ռւշ ի կուրծս — (ումեք). միտքը իյնալ,
խելքը զլուխը գալ
ի Չու— . ճամբայ իյնալ
ի Պատգամո— դեսպանով կամ ճամակով
խօսիլ
Սարդի ոստայն⁽¹⁾— , հենուլ. իմաստակա-
բանիլ
ի Միլոտ— . միտքը իյնալ, միտքն անցնիլ
Տապասոտ— . զետինը իյնալ
Տարսոծ⁽²⁾— . զետինը տարածուիլ
ի Տոկ—⁽³⁾ . երկար տեւել
Փախստական— . փախչիլ
Փախստեայ— . փախչիլ
զԲնով— . բնանալ

4. ԱՆՑԱՆԵԼ

ԱՆՑԱՆԵՄ, անցի, անց . չէզ. Անցնիլ. է-
անց ընդ արտորայսն ի շաբաթու : Ս. Գիրք :
— Յառաջ անցնիլ զերազանցել. Ընթա-
ցաւ եւ անց զԲնուսեաւ : Ս. Գիրք : Լուսինն
յորժամ անցանէ զարեգակամիր, սկսանի
տակաւ նուսազել. Եղինիկ.

— (զիւիք). զանց բնել. չկատարել. Անցանել
զբանիւ, զհրամանու, զպատուիրանաւ,
զուխտիւ, զգաշամիր ևն. կը նշանակէ խօս
քը, հրամանը, պատուէրը, ուխտը, դա-
շինքը չպահել ևն :

— (ըստ ինչ). սահմանէն դուրս ելնել, չը
պահել, զանց ընել. Անցանել ըստ օրէնս,
ըստ երգումն, ըստ հրաման ևն. կը նշա-
նակէ օրէնքը, երգումը, հրաման ևն. չը
պահել:

— Զեւել, կորսուիլ, զնօղուիլ. Անցցեն
կեանք մեր իբրև զհետս ամպոյ. Անց այն
ամենայն իբրև ստուեք : Ո. Գիրք :

1. «Եւ արդ արեւ ճշմարիտ սարդիուսայն կամեցան
անկունել՝ որ զցոս ոյսպէն զբոշեցին ի ստաղիր
գիրս ի բենաց» : Տեսլ. վեց. Ա. 4: «Արդ արեւ ճշ-
մարիտ սարդի ուսայն հենուն որ զցոյդ պ'տիս խօսին,
և ի վերայ ջուրը գիր հանեն որ զնդունայն խօր.
Հուրդս զցոս վարեն» : Թուղթ պրոկիլ առ Սամ. եւ
Մեր :

2. Մի տարձ անկեալ գնիցի ամենայն յափշտակո-
զաց. Ուկ. Յով.

3. Զթուցից այնուհետեւ վաստակն վաստակ, ոյլ որ-
չափ և ի տոկ անկանիցի, ևս քան զես քաղցը և
հեշտական թուի : Ուկ. մեկն. մըր.

— Եփջանիլ, մարիլ. ձրագն Ասոուծոյ չե-
ևս էր անցեալ. Ս. Գիրք : Եթէ բնաւ չը
տամք (Ճարտակ հրոյ), բնաւ անցանէ և ըս-
պառի : Եղիւէ :

— Մոոցուիլ, զանց առնուիլ. ծածկուիլ:
Անցցէ յինէն բաժակս : Մի ինչ անցցէ զքւէ
ի մեղաց խմոց : Եւ ոչ իրաւունք առ նովաւ
առանց կշտամբութեան անցցեն : Ս. Գիրք :
Մի անցցէ զմեօք և մեծապատիւ զօրու-
թիւնն որ կայ ի ճառիս : Բրադ. վեցօր :

— Աւելադրութեամբ կը գործածուի, ինչ-
պէս առնուլ, զալ, դառնալ, ելանել, եր-
քալ, կալ, նսել բայցերը՝ իբր զարդ :

Զձեռս և զոտս կծկէր և անցանէր ի
տան նստէր : Ուկ. մեկ. Պաւլ. Այլ տունն
հայրենի այրի և մեք անցեալ գոյուեմք :
Նոյն :

ԱՅՍ ԲԱՑՈՎ. ՇԻՆՈՒԱԾ ՈՃԵՐ

Անցանել անցից (ընդ ոք). բաներ պատա-
հիլ ըլլալ մէկուն

— զանցանել (զոմամի) . զերազանցել
— զուռուրք . ծերանալ
— ընդ գիրս . գիրեր կարդալ
— ընդ հուր . կրակով սրբուիլ՝ մաքրուիլ
— ընդ փորձ (իրիք). փորձով տեսնել,
փորձել

— ի հանգիսի. հնենուիլ, բաղդատուիլ
— յաշխարհէ . մեռնիլ
Թափ, ընդ թափ, զթափ— (յինչ, ընդ
ինչ). բափանցել
Թափանցանց— (յինչ, ընդ ինչ). բափանցել
ի Պար, ի պարու— . պարել, պար բռնել

5. ԱՆՑՈՒՑԱՆԵԼ

ԱՆՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի, ցո՛, ներգ. Ան-
ցունել, տեղէ մը տեղ տանիլ. Անցոյ ընդ
ծովն կարմիր : Ս. Գիրք :

— Խօրել: Անցոյց ցից ընդ գլուխ նորա :
Ս. Գիրք :

— Հեռացնել, մէկոի ընել. Անցո զանո-
րէնութիւն ի ծառայէ քումմէ : Անցոյինէն
զբաժակս զայս : Ս. Գիրք :

— Սահեցնել (օրերը ևն). Եւ զամե-
նայն ժամանակս ձմերայնոյն ուրախու-
թեամբ անցուցանէին : Ազար :

ԱՅՍ ԲԱՑՈՎ. ՇԻՆՈՒԱԾ ՈՃԵՐ
Անցուցանել զանցուցանել. Գերազանցել.

— զիիս, զմեհեանս . Կուռքերը . տանար.
Ենրը վերցնել, զնջել
— զմեզս . ներել

— ընդ թիւ (ինչ). համրել
ընդ կիրժ — (զոք). կրբել
ի Հանդիսի — (ինչ, զոք). բննել, աչել ան-
ցընել
Զարիս — (ընդ ոք). չարիք նասցնել
(Շարունակելի)

Մ. ԱՍԲԱՆՈՅ

ԸՆԹԱՑՔ ԾԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

—

ԳՈՅՉԻԹԻՒՆ ԱՍՏՈՒԽՈՅ

—

ՑԱՏԱԿԱԴԻԾ

Հոյակապ շէնք մը, ճարտարաշէն մեքե-
նայ մը տեմնելով, իսկուն կը խորհիմք թէ
նոքա շինող մ'ունին եւ իրենք իրենցին
եղած չեն, եւ թէ այդ շինող իմացական
էակ մ'է :

Եթէ մարդկային գործոց համար այսպէս
կը խորհիմք, հապա ո՛րչափ եւս առաւել
պարտիմք այսպէս մտածել ալիեզերաց հա-
մար, ոյր յօրինուած անքաղղատելի կեր-
պով գերազանց է մարդոց գործերէն եւ
յորում կը տեմնուին ա՛յնքանի կարգ, ներ-
դաշնակութիւն, իմաստութիւն : — Անուն
են տիեզերք, անթիւ աշխարհներ կը նուն
միջոցը, ոգեւորեալ, կենսակիր... եւ ո՛չ
մին կը շեղի իւր օրէնքն, իւր շաւդէն :

Դիտենք երկիրը, տունչեան եւ գիշերոյ,
քառեակ եղանակաց կանոնաւոր յաջոր-
դութիւնը, եւ նոցա արդիւնք : — անմիւ
էակք կ'ապրին երկրի վրայ . ամէնքն իրենց
վախճանն ունին եւ յայն համնելու միջոց-
ներ, բնագդներ : — Նախախնամ էակ մը
չե՞ն ծանուցաներ այս ամէնքն . — մօր մը
գութը, կաթը որով ի ծնանել մանկան կը
լցուին նորա ստինք, ինքնին միայն փաստ
մը չե՞ն իմաստուն եւ նախահոգ էակի մը
գոյութեան, որ կը հսկէ իւր ծեռակերտից
վրայ : — Դիտէ՛ գիշեր ատեն աստեղալից
երկնից տեսարանը . ծաղկունքը դաշտին,
վերջապէս անհամար անպատում գեղեց-
կութիւնքն ու սքանչելիքը բնութեան, եւ
չե՞ն գոչեր թէ « Կայ Աստուած » : Ահա՛
գեղեցիկ նիւթ մը ծեզ խորհրդած ելու եւ
գրելու :

ԸՆԴԱՅՑՆՈՒՄՆ

Երբ կը տեսնեմք մի շինուած հոյակասալ
և մեծակառաց, կը մտած եմք իսկոյն թէ մի
հանձարեղ ճարտարապետ յղացած է նորա
յատակագիծն և հսկած նորա շինութեան
վերայ :

Եղյնպէս երբ կը տեսնեմք մի մեքենայ
ճարտարաշէն և բարեյարմար, որոյ մէն մի
մասն ունի զիւր պաշտօն և կը կատարէ զայն
առանց զայլս արգելլոյ, այնպէս որ հսկայ
մեքենային անխուք ողջոյն կը թուալին դիւ-
րաւ և հեշտիւ՝ ծառայելով նպատակին որոյ
համար կազմեցաւ գործին, կը խորհիմք ան-
դէն թէ մի ուշիմ մեքենագիտի մտաց և
գիտութեան արդիւնքն է այդ :

Այո՛, կը խորհիմք թէ ո՛չ շինուածն այն
մեծագործ և ո՛չ մեքենայն հրաշագործ չեն
արգասիք դիալուածոյ, և չկարէին լինել ե-
թէ մի իմաստուն հանձար չույցը նոցա
ծնունդ :

Եթէ արուեստական գործոց համար այս-
պէս, ի՞նչ պէտք է ուրեմն մտածել տիե-
զերաց զարմանակերա յօրինուածոյն, կենաց
հիանալի կերպակերա երեւոյթներուն և
ընդհանրապէս բնութեան ամէն կարգի ըս-
քանչելեացն համար : Ոչ տպաքէն այն կար-
գըն, այն ներդաշնակութիւն, այն գեղեց-
կութիւնք և այն վսեմութիւնք զարս կ'ըն-
ծայեցնեն մեզ բնութեան լիրք և տեսուիք
անհամեմատ կերպիւ կը գերազանցեն մարդ-
կային ձեռակերտից բովանդակ կանոնաւո-
րութիւնն ու գեղեցիութիւնն : Կարելի՞ է
ապա ընդունիլ թէ տիեզերքն չունի մի ի-
մացական արարիչ և թէ դիալուած ըրաւ-
զայս ամենայն : Ի՞նչպէս հնար է որ նոյն
միտքն՝ որ ի տեսիլ մի արուեստական գործոյ
խսկոյն կը հետեւցնէ թէ մի արուեստագիտի
հանձարոյն և ճարտարարութեանն է պտուղ՝
կարենայ այլազգ իմաստասիրել արարչու-
թեան վեհաշուք տեսարանին առջեւ և վա-
րանի ընդունիլ մի ամենիմաստ և ամենար-
ուեստ արարչի գոյութիւնն :

Ի՞նչ անհուն է տիեզերք . մեր երկրագուն-
տըն, իւր բոլոր մեծութեամին, մի աննը-
մարելի կէտ է միայն անսահման միջոցին մէջ
զոր կ'ողեւորեն անհամար աշխարհներ մեծ,
յոյժ մեծ քան գերկիր . և սակայն ամէն
ինչ կը շարժի կատարեալ կանոնաւորու-
թեամբ և չափով, և անհունութեան դաշ-
տաց մէջ կը թաւալին գունտերն այն կեն-

սակիր տռանց իրերաց բազմություն և տռանց մաղիւ չափ վրիպելոյ չաւդէն որ գծուած է իւրաքանչիւրում ի նոցանէ :

Ո՞րպիսի կանոնաւոր կարգաւ երկրի վերաց կը յաջորդեն միմեանց լոյսն ու խաւար և եղանակը քառեակ, և այս գեղեցիկ յաջորդութենէն կը բղխին մեր աշխարհի ամէն բարիք և վայելչութիւնք : Եղան երսեք որ արեգակն յապաղէր ծագել ի սահմանակալ ժամու, կամ գիշերն յամէր տարածել զիւր քող վաստակարեկ բնութեան վերաց և հանգուցանել զնա :

Մինչ Զմերան սաստամնիք կը կակլեն զհող երկրի և յարմար կը գործեն զայն սերմանահանին երկաց, ոչ ապաքէն կը հասնի Գարուն երիտասարդ իւր գեղեցիկ օրերով որ հրաւեր կը կարգան մշակին վաստակոց, և յետոյ Սման որ իւր ջերմութեամբ կը հասունցունէ զպտուզո, և վերջապէս Աշուն սաստածեռն որ կը սպակէ տարին սպարգեւօք :

Անթիւ են էակք որք կը չնչեն միայն մեր հողագնասոյն վերաց, ամենեքին ունին իւրեանց ճակատագիր, և քանի՛օն քաջադէպ են միջոցքն որք չնորհուած են նցա որպէս զի գիմեն ի նախատ իւրեանց կենաց, ի՞նչպէս հզօր բնազդմաւնք կը մղեն զինքեանս առ այն ինչ որ կարեւոր է ի լրումն այդ ճակատագրի :

Ահա՛ կը ծնի մանուեկն, մերկ և տխեղծ, մի անծանօթ աշխարհի մէջ յանկարծ անկած կ'զգայ զինքն . չգիտէ ինչ . թէ թոզուս զնա, պիտի կորնչի անտարակոյս բայց տե՛ս դա կինն — իւր մոյրն — որ մի անհուն գորովով կը գրիէ զնա և նորա շըրթանց կը մատուցանէ այն կենսատու հեղուէն որ ճի՛շդ այդ վայրկենին կ'սկսի ծորիւ իւր ստեանց աղբերէն : ի՞նչ իմաստուն և նախահոգ խոնամք :

Այսպէս ամենուրեք են սքտնչելիք . ամենուրեք են կանոնաւորութիւն և ներդաշնակութիւն : Յո՛ր վայր և գարձնեմք մեր աշերն ի բնութեան, գեղեցկութիւն և վսեմութիւն յապուշ կը կրթեն զայնս և կը յափշտակեն մեր միտքն : Անհունապէս մեծըն և անհունապէս փոքրն միտնգամայն լի են խորհրդովք :

Ո՞վ է այն մահկանացուն որ, միմայն գիշեր ատեն բարձրացնելով աչքն ի կոմարըն աստեղազարդ կամ խոնարհեցնելով ի

մին ի չնորհալից ծաղկանց երկրի, չդոչէ իւր սրտին խորէն « Կայ Աստուած : »

Ո. Յ. ՊէրՊէրեսն

— 33 —

ԸՆԹԱՑՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

(Տես թիւ 41)

ԲՅԱՋԻԱՏԼԱՆ ՎԻԽԱԼԻ ՄԱՐՄՈՆ (Etats physiques des corps) . — Նիւթն երեք վիճակի մէջ կը ներկայանոց մեզ հասաւուն , հեղուկ, և կազային :

Հաստատուն վիճակի մէջ մարմինք քիչ շատ պինդ են և կը սպահեն որոշ ձև մը և ծաւալ մը . կրնան գործածուիլ ձեռաց մէջ տաշուիլ, կարուիլ, ծափլ, ևայլն . օրինակ՝ վայազ, քարերը, մետաղները, սառոյցք : Այսպիսի մարմնոց մէջ մասնկային ձգողութիւնը աւելի է և մասնիք իրարու վրաց հաստատ կը մնան . այս է որ կըսուի թէ հաստատուն մարմնոց մէջ կաղողութիւն (cohésion) շատ կայ :

Հեղուկ վիճակի մէջ մարմինք թոյլ են բուլուզին և մեր մտաներուն տեղի կուտան երբ գուշինք : Թէպէտ որոշ ծաւալ մը ունին, բայց որոշ ձև մը չեն կրնար պահել, որ մասնիք իրարու վրայէ կը սպահին : Օրինակ՝ ջուր, գինի, կաթ, քարիւզ, երկրի կը սուզութիւնն հեղուէները կը հուցնէ, կը ծաւալէ . ամենի մը կողերն մրայն կրնան արգիշել զանոնք որք իսկոյն ամանին ամեն խորշերն լեցնելով անոր ձևն է աւելուն :

Կաղային վիճակի մէջ մարմինք իրենց յատուկ ո՛չ ձև ունին և ո՛չ ծաւալ, որովհետեւ տարածական են, այսինքն անդադար ընդարձակուելով կը գրաւեն ամէն միջոց որ իրենց ներկայացուի . այսպէս են օդ, թըթուածին, ջրածին ածխային թթու և այլ կազեր, նուև չոգիներն : Կաղային մարմնոց մէջ տարածական զօրութիւնը շատ աւելի ըլլալով՝ անոնց մէջ մասնկային ծակտիկները անհամեմատ կ'ընդարձակէ, և այս ամէն կողմէ հաւասարապէս . իրենց այս յատկութիւնը տարածականութիւն (expensibilité) կը

կոչուի։ Կազերն ալ հեղուկներուն պէս ամանէ աման կը հոսին, ուստի երկուքն ալ հաւասարապէս կ'անուանին հոսուն (fluide)։

Քանի որ կազերն անդադար կ'աճին ծառալով, երբ կազ մը պարփակենք ամանի մը մէջ, անոր տարածականութիւնը ամանին կողերուն վրայ ձնշում յառաջ կը բերէ որուն պէտք է դիմադրեն այդ կողեր, ապա թէ ո՛չ ամանը կը խորտակի. այս ձնշումը կը կոչուի կազերուն առաջիդ զօրուրիւնը (force élastique)։

Մարմոց երեք վիճակներուն սահմանը կը կրկնենք հոս հետևեալ կերպով ամփոփելով. հաստառուները որու ձեւ եւ ծաւալ ունին. նեղուկի ունին որու ծաւալ, բայց չունին որու ձեւ. կազերն չունին ո՛չ ձեւ եւ ոչ ծաւալ։

Ամէն մարմին առանց իւր բնութիւնը վիճուելու կրնայ վիճակ փոխել, երեք վիճակներէն ալ անցնիլ՝ երբ առաւել կամ նուռազ տաքցնելով աւելցնենք կամ նուռազեցնենք իր մէջ տարածական զօրութիւնը։ Այսպէս, սառոյցը հաստատուն է, ջերմութեամբ կը հալի հեղուկ կ'ըլլայ, աւելի մեծ ջերմութեամբ կը չոգիանայ կազային կ'ըլլայ. ընդհակառակն չոգին պաղելով ջուր կ'ըլլայ, ջուրը պաղելով սառ կ'ըլլայ։ Ուրիշ մարմոց համար ալ այսպէս հասկնալ. միայն թէ չենք կրնար ամէն մարմոց համար արտադրել այն մեծ ջերմութիւնը որով կրնայ հալիլ, կամ այն մեծ ցուրտը որով կրնայ հեղուկանալ կամ հաստատունի վերածուիլ. այսուհանգերձ չենացած կազ մը որ հեղուկի ըլդառնայ, և ասոր համար գործածած են ո՛չ թէ միայն ցրութիւն, այլ և տարօրինակ ձնշումներ։ Կան սակայն մարմիններ ալ որոց բաղադրութիւնը կը փոխուի ջերմութեամբ. այս կարգէն են փայտը, թուղթը, կրաքարը, և այլք որք չեն կրնար հալիլ. հեղուկ ըլլալ։

(Նարունակիթի)

ԵԽՈՎՔ ԹՒՅԵԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԸՆԹԱՑՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ⁽¹⁾

ՀԻՆ ՔՈՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Ա. Բ Ե Խ Ե Լ Ք

ՃԵՆՔ

Քինկ. — Կանփիւկիոսականութիւնն՝ որ հիմնեալ է նախնեաց աւանդութեանց և սովորութեանց վերայ՝ ամփոփուած է ի չորս նուիրական մատեանս (Քինկ)։

Չորս Քինկերն են. Ա. ի. Քինկ, Ճենք իմաստասիրութիւնը. Բ. լի. Քինկ, ծխից և արարողութեանց գիրքն. Գ. Շի. Քինկ, երգոց և օրհնութեանց գիրքն և Դ. Շու. Քինկ, օրինաց, բարուց և վարչութեանց գիրքն. Այս Քինկը, մանաւանդ Շու. Քինկ, կը պարունակեն բաց ի առասպելախառն պատմութիւններէ և կրօնական պատուէրներէ՝ վարելու արուեստն, քաղաքական օրէնքներ և իմաստուն առածներ (արօրիէցմե)։

Կանփիւկիս. — Յետ յոգնաթիւ իմաստուն և բարեսպաշտ իշխանաց, նախնեաց կրօնն եղծուած էր, ներքին կուիք բազմացած, աւազակութիւնը տակաւ սովորութիւն գարձած էին, և այնպէս Ճենքաստոն գայթ ի գայթ կը գլորէր յանդունդն կորըստեան, երբ ծնու կոնֆիւկիս (Քոնկ-Ֆու. Զէ), Շան-Լիանկ. Զէ ծեր կաշմրուան զօրականին որդիին. Կոնփիւկիսի մայրն Զինկ-Զայ, որպէս կ'ըսէ աւանդութիւնը, ըստ ազդարարութեան երկնային պատգամի մը գնացած էր յուխտի Նիլ լեռան, ուր քարայրի մը մէջ ծնու զնու. Մանուկին կոնփիւկիս բոււն սէր ունէր յուսումն, մաս նուռապէս պատմութեան իմաստասիրութեան, և խնամով կ'ուսումնասիրէր իւր երկրին անկման պատճառաները. Կանուխ ամուսնացաւ, բայց, որպէս և կը պատահի վաստակաւոր երկասիրաց, նորա հոգին չսովորահային գիպոււածոց. ամուսնական կենաց մէջ ձանձրոյթ և գժգոհութիւն զգաց, ուստի բաժնուեցաւ իւր կողակցէն որ ծնած էր նմա ուստր մի. Հրաժարեցաւ իւր կարեւոր պաշտօններէն և ա-

(1) Տես թիւ 11.

ուանձնութեան մէջ պարտավեցաւ իմաստա-
սիրական խուզարկութեամբ . և մինչ 22 տա-
րեկան էր՝ սկսաւ իւր առաջին քարոզու-
թիւնը :

Կոնֆիւկիոսի աշակերտք , մանսւանդ
Մէնկ-Զէս , մեծաւ եռանդեամբ տարածե-
ցին նորա վարլավետութիւնը :

Վարչուրիւն . — ի ձենաստան , որպէս ի
հնումն , նոյնալիս այժմ՝ քաղաքական կարգ
և կանոնք նահապետական վիճակի մէջ են :
Հայրը բացարձակ իշխանութիւն ունի իւր
ընտանեաց վերայ : Ինքնակալն է միահեծան
տէր . նորա իշխանութիւնը հիմնեալ է աւան-
դութեանց և սովորութեանց վրայ : Վար-
չութիւնը աստուածական է , հաստա-
տուած հնաւանդութեան եւ կոյր հպատա-
կութեան վերայ : Վարչութիւնը կը նմանի
ճիշճիչ մեքենայի մը , ուստի ձենք դանդաղ ,
անզօր , սարուկ և նուաստ ժողովուրդ դար-
ձեր են և յետինյիմարութեան մատնուած :

Ճարտարուրիւն . — ձենք , որպէս կը
կարծուէր երբեմն , չեն բարբարիկ . նոցա
քաղաքակրթութիւնն , որպէս տեսաք , է
աշխարհի հնագոյն քաղաքակրթութեանց
մին՝ տեղական հանգամանաց ազգեցու-
թեան ներքեւ ծնած ծաղկած : ձենաց ծա-
նօթ էին կողմնացոյցն , վառօդն , տպագրու-
թիւնն և ազգի ազգի ճարտարութիւնք :
Հողագործութիւն և շերամբուծութիւն
նուիրական զբաղումներ կը համարուին յա-
շըս ձենաց : Հողագործութեան վեհ պաշտ-
պանն է ինքնակալն , իսկ շերամբուծու-
թեան՝ ինքնակալուհին : ձենք ժողովրդեան
պատմութեան կենաց ծառոյն չորացեալ բա-
զուկն համարուած են , կամ կը նմանին զմռոս
ուեալ մետաքսապատ մովիայի մը մեհենադը-
րուշմերով զարդարեալ , հակառակ իրենց
մեքենայական ճարտարութեան :

Ճենական լեզու . — ձենական լեզուն կը
բարդանայ 450 միավանկ և անփոփոխ բա-
ռերէ , (բայց գրական լեզուն ունի հազա-
րաւոր նշաններ , ոյց իւրաքանչիւրը կը
յայտնէ յատուկ գաղափար մը) : Այս բար-
բառը գերականութիւն չունի , այսինքն ոչ
փոփոխութիւն , ոչ հոլովումն եւ խոնար-
հումն . անունը , բայց , մակրայը չեն զանա-
գանուիր , բայց ընդհանրապէս ենթակայն
բայէն յառաջ կը դրուի : (1) Ո՞ւ իցէ բառի

նշանակութիւնը կ'որոշուի փոխադարձ յա-
րաբերութիւններէ , և ո՛ւ և իցէ բառ կրնայ
յայտ առնել 30—40 գաղափար :

Աղրիւրք նենական նաղակալրութեան պատ-
մուրեան . — Ժեօրգ Վէպէր , Տիեզերա-
կան պատմութիւն . Մասն - Միւլլեր , Գիտու-
թիւն լեզուաց . Ֆիւլին Վէնսոն , Արդի կը-
րօնի եւ Բիժոն , Աշխարհագրութիւն :

(Տարունակելի)

ԳԱԼԻՒԹ Յ. ԽԱՉԻԵՍ

.....

ԶԱՆԱԶԱՆՔ

ՈՒՍՈՒՄՆ ԳԱՍՏԱԿԱՆ ՀՆԹԻԹԵՑՆ(1)

Վէդի ի ՏՐՈՎԱԿԱՆ ԴԻԻՑԱԶՆԵՐՆՈՒԹԵԱՆՑ
ԸՆՍ ՀՈՄԵՐԻ ԵՒ ՈՂԵՐԳԱԿԱՅ

2. ՀՈՐՄԱՆԵՎ ՊԵՇԵԽԱՍՑ ԵՒ ԹԵՏԻՍԱՑ

Պելիոն¹ լելան վերայ Պելիո² , էակեայ
որդին , ամուսնացաւ ներկնայ³ գուստը
գեղցիկ թետիսայ հետ : Ամենայն ան-
մանք , Զես⁴ և Հերա⁵ , իշխանք Ողիմ-
պոսի⁶ , Աթենաս⁷ և Արէս⁸ , երկոքին ան-
զէն , Ապոլօն և Արտեմիս⁹ , Ափրոդիտէ¹⁰ և
Հեփեստոս¹¹ , Փամբ¹² և Շնորհք¹³ և Մու-
սայք¹⁴ և Համօրէն Ներէիդայք¹⁵ , Քորք
հարսին , Եկան Պելիսի տունն խնդակից
լինել և ընծայաբեր ամուսնացելոց : Անդ-
ամենեքին անձնատուր եղան ուրախու-
թեան : Դանիմէդգ¹⁶ , Արամազդայ պա-
տանի մատուակին , կը լնոյր անուշա-
բոյր նեկտարն ուկի բաժակաց մէջ , ու-
կեծամն Ապոլօն կիթառ կը հարկանէր ,
իսկ Մուսայք կ'երգէին իննաձայն նը-
ուագ , և Շնորհք և Փամբ և այլ ման-
կամարդ դիցուհիք՝ ձեռն ի ձեռն յօ-
դած՝ պար կը յօրինէին բոլորաձեւ , յոր
կը խառնուէին կաքաւելով Արէս և Հեր-
մէս¹⁷ և այլ երիտասարդք : Սակայն այս
բաղմաղուարձ ինչոյքն խոռվեց Հե-
ռըն¹⁸ առ ցասման զի ինք միայն չէր հը-

(1) Մաքս.Միւլլեր. լեզուագիտութիւն , 311. 312.

(1) Տես թիւ 5.

բաւիրուած այդ անխռով հանդիսին : Եւ սորա համար ,անտես իմն , կը գլորէ դիցուհեաց մէջ սոկի խնձոր որոյ վերայ կայր գրեալ «Գեղեցկագունին» : Եւ ահա իսկոյն յուն կ'ելնէին երեք աստուածուհիք , չերա և Աթենաս և Ափրոդիտէ , և իրարմէ կը յափշտակէին խընձորն : Եւ քանզի երեքին ևս կը վիճէին գեղեցկութեան համար և ո՛չ ոք տեղի կուտար այլում , դատաւոր կացուցին զջևս : Բայց Զես , վախնալով թէ մի' դուցէ իւր վճիռն ի նպաստ միոյն վրշտացնէ միւս երկուքն , աստուածուհիներն չերմէսի միջոցաւ յղեց առ Պարիս¹⁹ , որպէս զի նա դատէ և տայ խնձորն գեղեցկագունին :

(Նարունակելի)

Թարգմ. ի Յունէն

Ո. Յ. ՊէրՊէրեան

Տանօրութիւն յաւելեալք ի բարգմանչեն

2-1. Պելի՛ն է շղթայ սեպեցեալ լերանց ի թեսազիս : Իւր կողեց վրայ կային անտառք և գագաթեան վրայ մեհեան մի Արամազդայ : Այս լեռ նշանաւոր եղած է դիցաբանութեան մէջ . մին էր այն լեռներէ զորս հակայք մի զմիով բարդեցին պաշտելու համար երկնից թագաւորն իւր բարձրագահ բնակարանին մէջ յնդիմազոս : Յածախ ակնարկութիւն կը լինի գրականութեան մէջ Պելի՛նի և Օսաոյի զորս կը կայք գիվեցին միմեանց վրայ : Մերձ ի գտագաթն կայր քարայրն Քիրոն կենաւրոսին . այս լերան վրայէն կորուած էր վայան որով շինուեցաւ Արգոյ անուն հաւեն որ ծառոյեց Արգոնաւորդաց հռչակաւոր արշաւանին ի Կողքիս :

2. Պելի՛ն էր որդի էակեայ և հայր Ափելեայ : Սնգգուշութեամբ սպաննած ըլլալով իւր վերջին եզրայրն՝ զՓոկոս , իւր հայրն վանեց զինքն Եգին կզզիէն ուր կը թագաւորէր : Պելի՛ս ապաւինեցաւ ի Փըթիա (Թեսազիոյ մէջ) , որոյ թագաւորն Եւրիտիոն սրբեց զինքն իւր ոճրէն և տուաւ նմա ի կնութիւն իւր դուստրն՝ Անտիգոնէ իւր թագաւորութեան մէկ երրորդ մասին հետ : Բայց գարձեալ յակամայիցս սպաննելով իւր աներն կալիստնի հռչակաւոր որսորդութեան մէջ ուր ընկերացեր էր նմա , երկրորդ անգամ վարեց թափաւիկ կեանք

մը . ի վերջոյ ապաստանեցաւ ի Յոլիս , որոյ թագաւորն Ակասաս սրբեց զինքն դարձեալ : Սնդ Աստիգամիս , կինն արքային , տարփացաւ նմո , այլ մերժուելով ի նմանէ , զրպարտեց զնա իւր ամուսնոյն՝ որ հրամայեց կախել զնա Պելի՛ն լերան վրայ : Պելի՛ս յաջողեցաւ իւր կապերը կտրել և , սպաննելով վլկաստ և իւր կինն , թագաւորեց երկրին : Իւր առաջին կնոջ մահուանէն յետոյ ամուսնացաւ թետիսայ հետ , որ էր մին ի Ներէիդայց : Ճակատագրեալ էր սմա կին լինել մահկանացուի . բայց , իրեւ զՊրոտէս , ունենալով զօրութիւն յայլ և այլ կերպարան փոփոխուելու ըստ կամի , զանաց խուսափիլ Պելիւէն . այլ սա , Քիրոն կենաւարոսին խրատեալ , զգուշութեամբ պահեց զգիցուհին մինչեւ որ նորոս հաւանութիւնն ստացաւ : Այս հարսանիք կատարուեցաւ Պելի՛ն լերան վերայ ուր հրաւիրուեցան սմենայն դիք բաց ի Հետէն , որպէս կը պատմնի ի վեր անդր : Աքիլլէս եղաւ պտուղն այս ամուսնութեան : Տրովական պատերազմին չկրցաւ ընկերանաւլ իւր որդւոյն , քանզի ծէր էր . մնաց ի Յունաստան և ապրեցաւ յետ մահու իւր որդւոյն : Աքիլլեայ բացակայութեան ատեն Ակաստայ որդիք գահընկէց ըրին զնա :

3. ՆերեիՍ , դիք ծովային , Ովկէսնու և Տեթիսայ որդի , ամուսնացաւ Դորիսի հետ յորմէ ունեցաւ յիսնետի Ներէիդայքքն : Կը ներկայացուի իրեւ իմաստուն և անսխալ ծերունին ծովու , որոյ խորոց մէջ կը բնակի . Իւր իշխանութեան սահմանն է մասնաւորակէս Եգիսկան ծովն , յորմէ մերթ իւր կոչումն Եգիսկան : Ինչպէս ծովու այլ տառուածներ , և սա կը համարուէր զապագայն գուշակելու և մահկանացուաց այլ և այլ կերպարանօք երևելու ձիրքն ունեցող : Արուեստագիտական գործոց մէջ կը ներկայացուի , այլ ծովային դիք նման , կնիւններով յօնից վրայ ու կրծոցն և երկնակատպոյս մօրուքով :

4. ԶեիՍ է Արամազդն ըստ Յունաց , մեծագոյնն ի դից : Կը կոչուի Հայր դից եւ մարդկան , վեհագոյնն և հզօրագոյնն յանմահու որդւմ ամէն այլք պատկառ ու հնազանդ կան : Նա է գերագոյն իշխան և իրաւարար . ամենայն ի նմանէ կը բվիմի , ըստ հածոյս նա կը բաշխէ մարդկան բարիքն ու չարիքը , և ճակատագրին իսկ հնազանդ

կոյ նմա : իւր զէնքն են շանթքն ու փայլատակունք , և երբ շարժէ իւր վահանը՝ կը յարուցանէ հողմ և ամպրոպ : Եր որդի կը ուսուսի և Հռէայ , և եղբայր Պոսիդոնի , Հադէսի (Պղուտան) , Դեմետրի , Հերայ որոյ և ամուսին : Երբ ինքն և իւր եղբարք բաժանեցին իրենց մէջ աշխարհի իշխանութիւնը վիճակաւ , Պոսիդոն առաւ ծովը , Հադէս՝ գժողոքը , ինք՝ երկինքն ու վերին մարզերն , այլ երկիրն մնաց կալուած հասարակաց : Կը համարուի սնեալի կրետէ , ուր իւր մայրն Հռէա փութաց ծածկել իւր որդւոյն ծընունդն , ըստ խրատու Ռւրանոսի (Երկինք) և Գրէայ (Երկիր) , փախցնելով զայն հօրմէն որ ի ծնանելն կը լափէր իւր որդիքն և որուն առջեւ այն անդամ քար մը դրած էր փոխանակ նորածնին : Կռոնոս յետոյ ստիպուեցաւ դուրս տալ իւր կուլ առաւած որդիքն և նախ այդ քարը զոր յետոյ ուրեմն Զեւս դրաւ ի Դեղիիս : Զեւս զօրանալով ազատեց Կիկոպներն աշզորս կռոնոս շըլթայտ էր , և սոքա ի ցոյց երախտագիտութեան շանթն ու փայլակները դարրնեցին իրեն : Սոքա և Հարիւրձեռնեայ (hecatonchires) հսկայքն , Բրիտառեւս , Կոտտոս և Գիւէս , զորս նոյնալիք ազատեց Տարտարոսին ուր արգիլեալ էին կռոնոսի հըրամանաւ , օգնեցին իրեն այն կռուսյն մէջ զոր իւր եղբարց հետ մզեց իւր հօր և Տիտանաց գէմ . Զեւս յաղթեց , գահընկէց ըրրաւ գկուսնոս և գծիտանսն գահամիթեց ի Տարտարոս ուր պահեցին զնոսա Հարիւրձեռնեայքն : Այսպէս նա եղաւ վեհագոյն տէր տիեզերաց և ընարեց իւր կին նախ զՄեափի (անձնաւորութիւն խմասութեան) : Երբ ստ յղացաւ , վախնալով որ մի՛ գուցէ քան զինքն խմասուն և հզօր զաւակի մը ծնունդ տայ , լսփեց զայն յղութեան տռաջին ամսոյն մէջ , և յետոյ ինքն ծնունդ տռաւ Աթենասոյ (խմասութեան դիցուհոյն) որ իւր ուղեղէն դուրս ելու սպառազէն : Յետոյ Զեւս եղաւ հայր ժամուց և Բախտից , Երեք Շնորհաց , Պերսեփոնէի , Մուսայից , Սպորտնի և Արտեմիտեայ , Հէրէի , Արէսի և Հեփեստեոյ և դիւցազանց ոմանց զորս ունեցաւ իւր այլ և այլ կիների , աստուածուհի կամ մահկանացու : Այսպէս Ողիմալական Երկուտասան մեծ դիք և դիցուհիք , բաց յայլոց , կը սերին ամէնքն ալ իւր կռոնոսէ :

բազմաթիւ վերադիրներ , ոմանք այն տեղեաց անուններէն առնուած յորս մեհեան ունէր , այլք իւր պաշտօններէն ու ստորոգելքէն հանուած : Հոմերոս յաձախ կը կոչէ զնա ամպրոպալին , շանրընկէց , ամպագումար : Նուիրական էին իրեն արծիւը , կաղնին և լերանց կատարք , և ընդհանրապէս կը զոհուէին իրեն այծ , ցուլ և կով : Իւր խորհրդական նշանակքն են արծիւ , շանթ և յաղթութեան մի պատկերն զոր ի ձեռին ունի , մերթ և եղջիւր մ'առատութեան :

5. Հերս . է քոյր և ամուսին Զեւսի , այլ ո՛չ և ինքն դշխոյ գից և մարդկան . յետոյ ուրեմն նկատուեցաւ թագուհի Երկինից . թէ և յիլականին այլ աստուածք կը մատուցանեն առ Հերա զնոյն յարգանս զոր առ Զեւս կ'ընծայեն , և սա ինքն կը լսէ նորա խրատոց և իւր գաղանիքն կը յայտնէ նմա , այլ իշխանութեամբ Հերա յոյժ ըստոր է քան իւր ամուսինն ու կը պարտի նմա հնազանդութիւն անպայման : Հերոցի կ'ընծայուի սէդ ու լնախանձուտ բնաւորութիւն . յաձախ վէճներ ունեցած է իւր ամուսինն հետ , որ անդամ մ'ամպերէն վար կախած է զայն ձեռքերը շղթայեալ և ստքերուն սալեր կապուած : Անողոք է իւր հետն ընդդէմ բոլոր այն որդւոց զորս Զեւս ունեցած է մահկանացու կիներէ , ինչպէս և նոցա դէմ որք իւր գեղեցկութիւնն արհամարհած են : Զեւս ի նմանէ ունեցաւ զՄերէ և զՀերէ , իսկ զՀեփեստոսս Հերա յղացաւ առանձին՝ փօխանակ զի Զեւս ալ առանձին ծնունդ տռաւած էր Աթենասոյ : Կը նկարուի իրեւ կին պերճաշուք , հասուն հասկաւ , գեղեցիկ ճակառվ , մեծ աշերով , լուրջ և ակնածելի դիմօք , և հերքն ապարօշաւ զարդարուն , յաճախ քօղ մը ձգածետին , և մական ի ձեռին բազմած ի գահ , առ երի ունենալով սիրամարգ մ'որ նուիրական էր իրեն : Իրեւ ինքն միայն բուն ամուսնացած յամէն դիցուհեաց Ողիմալուի , կը նկատուի նաև դիցուհի ամուսնութեան և ծննդոց . կը պաշտուէր նա մանաւանդ յՄրգոս , որոյ մօտ ունէր չքել մեհեան , որպէս և ուրիշ մ'ի Սամոս :

6. ՈՂիՄՊՈՍ է նշանաւոր շղթայ լերանց Յունաստանի ի մէջ Թեսազիոյ և Մակեդոնիոյ : Գլխաւոր գլուխին , Ողիմալոս լեռուն (Լաշա) , ունի 2972 մեդր բարձրութիւն :

Սնդ կը գնէին նախնի Յոյնք դից բնակարանն։ Բատ Հոմերի դիք ունին ի նմա իւրեանց պալատներն ցերեկը կը ժողովին Զեւսի տան մէջ, մանկագոյնք ի դից կը պարեն, և Մուսայք անմահից խումբը կը զուարձացնեն երգովք եւ քնարահարութեամբք։ Ամսոց պատնէշ մը, որոյ դրունք կը պահպանեն ժամք, կը ծածկէ զայնս մահկանացուաց աչերէն։ Կան ուրիշ երկու Ողիմպոներ ես, մին ի Բիւթանիա (Պրուսայի մօտ), Քեփի. Տաղ, որ ունի 400 մեդր բարձրութիւն, և միւսն ի սահմանս Բիւթանիոյ և Գաղատիոյ, Ալա-Տաղ։

7. Աթեննայ է մին ի մեծ աստուածուհեաց Յունաց, յաճախ կոչուած Աթեննաս-Պալլաս կամ Պալլաս։ Դուստր էր սա Զեսի, ծնած նորու ուղեղէն յոտից ցգլուխ սպառագէն, զի յառաջ քան զծնունդն Զես կը նած էր նորու մոյրն՝ զՄետիս (իմաստութիւն)։ Անձնաւորութիւնն էր միւսորեալ զօրութեան և խոհեմութեան։ Իրբեւ պաշտպան երկուագործութեան, կը նկատուի ըստեղծիչ արօրոյ, հողասանտեր, և այլ գործեաց մշակութեան։ Օգտակար արուեստք և գեղարուեստք իւր պաշտպանութեան տակ էին։ Յետագայ մասենագիրք կը համարեն զինքը մտնաւանդ իրբեւ դիցուհի իմաստութեան և դիտութեանց։ Պատերազմի ալ դիցուհի է, և իրբ այն կընկարուի միշտ զինեալ, եգիսով ու ոսկեայ նիզակու։ Մասնաւորուպէս պաշտպանն էր Աթէնքի, զոր իւր անուամի յորչորջեց։ Երբ, Պոսիդոնի հետ մրցելով, Զիթենին ստեղծագործեց։ Ի պատիւ իւրեան կը կատարուէին յԱթէնս համաթենական տօնք, որոց թափօրն էր հրաշակերտ քանդակեալ Պարթենոնի ճակատը, — մեհեան հոյակապ համակ մարմարեղէն՝ կառուցուած յանուն իւր (բարբէ՛նոն կը նշանակէ յուն. կոյս)։ Աթէնքի միջնարեգին վրայ։ Զիթենին, օձն, աքաղաղն և բուէծ նմա էին նուիրակուն։

8. ԱՐԷՍ (Մառս, ըստ Հոռոմոց) առ Յոյնս էր աստուած պատերազմի, որդի Զեսի և Հերաց։ Կը ներկայացուի սիրող զշունդ և զաղմուկ մարտից, զիտորած մարդկան և զիործանումն քաղաքաց։ Իւր վայրագ և արիւնաւուշա բնաւորութեամբ ատելի էր դից և իւր ծնողաց իսկ։ Հոկտյակերպ այլ գեղեցիկ, սիրեց զԱստղիկ՝ գեղաց դիցուհին էին իւր կը լինէր առարկա սիրութիւն, որով կոչուած վրփրածին, և ոտքն առաջի անգամ դրած ի կիպրոս կզզի, որով և կիպրածին յորջորջուած։ Էր կին Հեղիեստեաց, այլ սիրեց և զԴիտնիսոս, զՀերմիս, զՊոսիդոն և զմահկանացուս Անքիսէս և Ասոնիս։ Գեղեցկութեամբ կը զերանզանցէր զամէն դիցուհիս ունէր նաև զօրութիւն շնորհելոց այլոց գեղ և հրապոյր անդիմադրելի, և ո՛վ որ ածէր նորա դիւթական դօտին։ Խոկոյն կը լինէր առարկա սիրոյ և տենջանաց։ Բոյսերէն մուրան, վարդն, խնձորն, մեկոնն նուիրական էին իրեն, իսկ կենդանիներէն ձնձղուկն, սիրամարդն, աղաւնին, ծիծառն և տուարածահաւն, որք կը ներ-

թեան իմիք, սալաննեց Պոսիդոնի որդւոց մին պաշտպանելու համար իւր դուտեր պատիւն, և ծովուց աստուածն բազոքեց նորա դէմ առ դիս Ողիմպոսի, որք յարեան գումարեցան Աթէնքի մէկ բլրոյն վրայ։ Արէս արդարացաւ, և բլուրն կոչուեցաւ Արխապագոս (Արփոս, Բա՛ղոս, Արէսեան բլուր)։

9. ԱԹԵՆՑԻՍ (Տիանա Հոռոմոց) մին ի մեծ աստուածութեանց Յունական դիցարանութեան, էր քոյր երկուորեակ Ապօղոնի, գուսար Զեսայ և Լետովայ վարսագեղին։ Իրբեւ իգական Ապօղոն, նոյն գալափարը կը ներկայացնէ։ Նորա նման զինեալ յաղեղն ի նետ, կ'առաքէ պատուհաս և մահ ի մարդիկ և յանասունս։ յանկարծական մահունք, մանաւանդ կանանց, իւր նետից արդիւնք կը համարուէին։ Այլ, իրբեւ վիկողոն, էր նաև խափանարար չարեաց, կ'ավանիկը ու կը բուժէր մահկանացուաց ցաւերը։ մանաւորապէս խնամածու էր ծննդարեր կանանց, կը նկատուէր նաև իրեւ դիցուհի հօտոց և որսոց։ Իրբեւ զԱպօղոն, էր ամուրի, զգասա, և ո՛չ երեք նուածուած ի սիրոյ։ Զիրիսն նետահար ըսպաննեց զի մեղանչած էր իւր պարկեցուութեան, և զԱկտէսն փոխեց յեղերու՝ քան զի լսգանաց մէջ տեսած էր զինքն։ Երբ իւր եղբայրն արեւու (Հելիոս) հետ նոյնանցաւ, ինքն ալ Սելենեայ կամ լուսնոյ հետ նոյն համարուեցաւ առ յասկա։

10. ԱՓՐՈՂԻՑԻՏ (Վէնիւս ըստ Հոռոմոց) է յունական աստուածուհին սիրոյ և գեղեցկութեան։ Հոմերի իլիականին մէջ կը ներկայացուի իրբեւ դուստր Զեսի և Դիոնիսի, այլ յետագայ բանաստեղծք կը պատմէն զնա ծնեալ ծովու փրփրածին, որով կոչուած վրփրածին, և ոտքն առաջի անգամ դրած ի կիպրոս կզզի, որով և կիպրածին յորջորջուած։ Էր կին Հեղիեստեաց, այլ սիրեց և զԴիտնիսոս, զՀերմիս, զՊոսիդոն և զմահկանացուս Անքիսէս և Ասոնիս։ Գեղեցկութեամբ կը զերանզանցէր զամէն դիցուհիս ունէր նաև զօրութիւն շնորհելոց այլոց գեղ և հրապոյր անդիմադրելի, և ո՛վ որ ածէր նորա դիւթական դօտին։ Խոկոյն կը լինէր առարկա սիրոյ և տենջանաց։ Բոյսերէն մուրան, վարդն, խնձորն, մեկոնն նուիրական էին իրեն, իսկ կենդանիներէն ձնձղուկն, սիրամարդն, աղաւնին, ծիծառն և տուարածահաւն, որք կը ներ-

կայացուին յաճախ իրեւ իւր կառքը ձգող կամ իւր պատգամաբերք։ Արուեստագիտական գործոց մէջ կը ներկայացնայ ընդհանրապէս իւր երս կամ կուբիտոն (Սէլ) որդւոյն հետ։ Կիվրոս և կիթերա կղզիք գլխաւոր վայրերն էին յորս կը պաշտուէր։ Իւր պաշտօնն ի Յունաստան թուրի մտած Փիւնիկեցւոց ձեռքով, և ինքն նոյն ընդ սեմական Աստարդեայ։

11. ՀԵՓԵՍՏՈՒ (Վիւլգէն Հուովմայեցւոց) էր աստուած հրոյ, ըստ Հոմերի որդի Զեսի և Հերայի, այլ ըստ յետագայ տւանդութեանց ծնեալ անհայր իւր մօրմէն։ Դարձեալ ըստ Հոմերի կաղէր ի ծնէ, և այնպէս անհանոյ իւր մօր որ սա Ողիմալուին ի վայր գահավիժեց զնա ու ծովու դիցուհիք զայն ընդունելով ինն ամ բնակեցուցին զնա Ողիկանու խորը քարայրի մը մէջ։ Յետ յերկին վերադառնալոյ, կուռոյ մը մէջ իւր մօր Հերայի կովը բռնելով ընդդէմ Զեսի, աստուածոց Հայրն ոտքէն բռնելով վերսախն վար նետեց, այս անդամ, ամբողջ օր մը գահավէժ իյնալէ յետոյ, հասաւ Լեմնոս կղզին։ Բատ ոմանց այս անկում եղաւ պատճառ իւր կաղութեան։ Բատ որում հուրն է պիտանի ձարտարութեանց, նկատուեցաւ ալիս և ձարտարագէտ։ իւր ապարանքն յՈղիմալոս աստեղց հանդոյն չողչողուն էին և անկործան։ անդ էր իւր գործանոցն, ուր կային իւր սալն և քսան փուքք որք ինքնաշարժ կը գործէին ըստ իւր հրամանին։ Ինք չինածէր Ողիմակեան դից բոլոր պալատներն, որպէս և կուց նորածոյլ զէնքեր Աքիլեայ։ Յետագայ զրոյցք իրեն գործաւոր կուտան կիկղովներն, և դարբնոցը կը դնեն ո՛չ ևս Ողիմալու վրայ, այլ մի հրամային կըզգւոյ մէջ։ Առ Հոմերի իւր կինն է Քարիս, առ Հեսիոդեայ՝ Ագլայէ, մատաղագոյնն ի Շնորհաց, իսկ յՈդիսականին՝ Ափրոդիտէ։ Յունական արուեստի լաւագոյն ըրջոնին մէջ կը ներկայացուի իրեւ այր հուժկու, մօրուսաւոր, և կը ճանչցուի մուրմէն կամ մի այլ գործիքէ, ձուածե գդալէն կամ հանդերձէն որ մերկ կը թողու ուսն ու աջ բազուկը։

12. ԺԱՄԲ Զեսի և Թեմիսի գտներքն էին ու կը բնակէին յՈղիմալոս։ Էին արեգական պաշտօնեայք ու կը բանային երկնից գըրունքն։ Մերթ կը համարուէին օրուան բանմանց հսկողք, և յայնժամ թուով էին

40 առ Յոյնս, 42 առ Հոռոմն։ մերթ կը նկատուէին սրահապանք եղանակաց, և այն ատեն հինգ միայն կը հաշուէին, Դիկէ, իրենէ, Եւնոմիա որոց մէն մին կը հսկէր մի եղանակի, գարուն, ամառ, ձմեռ, և կարսօն թալադիս, հսկողք աշնան։ կը նկարագրուին մատաղք, գեղեցիկք, հոտաւէտք, և Շնորհաց հետ պարանցիկ, մինչ կ'երգէին Մուսայք դից զուարթ ակումբին մէջ։

13. ՇՆՈՐՀԱՑՔ (Խարիդայք) էին անձնաւորութիւն շնորհաց և գեղոյ։ կը համարուէին Զեսի դասերք, և էին թուով երեք, Եւփրոսին, Ազլայէ և Թալիս։ Յաճախ կը նկարագրուին իրեւ դից սպասաւորող։ ի սկզբան զգեցեալ, այլ ապա անհանդերձ կը ներկայացուէին, գիրկրնդիտառն փարած միմեանց։ Շնորհ ու գեղ կը փոխանցեն այն ամէն լանի որ հաճոյ ու ազնուարար է դից և մարդկան։ Այլ մասնաւորապէս կը սիրեն բանատեղծութիւնն, ուստի և բարեկամեն Մուսայից և նոցա հետ կը բնակին յՈղիմալու։

14. ՄՈՒՍԱՅՔ ըստ առաջին մատենագրաց էին դիցուհիք ներշնչողք երգոց, իսկ ըստ յետին զրուցաց են պաշտամնք բանաստեղծութեան զանազան սեռից, թուով հաշուեալ երեք ի սկզբան, այլ յետոյ՝ միշտ ինն։ կը համարուին Արամազդայ և Մնեմոսինեաց դասերք, ծնեալ ի ստորոտս Ողիմալոսի։ Ահաւասիկ նոցա անուանք և պաշտամունք։ 10. Կլիօ, մուսայ պատմութեան։ կը ներկայացուի նստած, ձեռքը բռնած թղթի գլան մը, կամ գրոց արկղով մը։ 20, ԵփերՊիկ, մուսայ քնարական բանաստեղծութեան։ կը նկարուել սրակարուէ սրնդաւ։ 30, ԹԱԼԻԱ, մուսայ կատակերգութեան և զուարթ կամ հովուական բանաստեղծութեան։ կը նկարուի կատակերգական դիմոկաւ, հովուի գաւազանաւ կամբաղեղան պուակաւ։ 40, ՄԵԼՊՈՄԵՆ, մուսայ ողբերգութեան, կը ներկայացուի ողբերգական դիմոկաւ, Հերակլեայ մահակաւն կամ սրով, գլուխն բարունակաւ պսակուած և սոլերյուս։ 50, ՏԵՐԲՍԻԲՈՐ, մուսայ պարուց և երգոց, կը նըկարի քնար ի ձեռին։ 60, ԵՐԱՍՄՈՎ, մուսայ սիրային բանաստեղծութեան և մնջկատակ խաղու։ սա ևս ունի մերթ քնար։ 70, ՊՈԼԻՄՆԻԱ, կամ ՊՈԼԻՀԻՄՆԻԱ, մուսայ վսեմ երգոյ, ընդհանրապէս ներկայացեալ առանց խորհրդական նշանակաց, իրեւ մտախոն։

8^o, ՈՒԽԱՆԻԱ, մուսայ աստեղագիտութեան, կարկնաւ և երկրագնդիւ ներկայացուած . 9^o, ԿԱԼԼԻՌՊԵ, մուսայ դիւցազներգակ բանաստեղծութեան . կը նկարուի պնակիս և գրոց ի ձեռին ու մերթ գալարեալ թղթով կամ մատենիւ : Մուսայից սիրելի բնակարանն էր Բէովլուս մէջ Հելլիոն լեռն, ուր էին Ագանիպայ և Հիպոլիտեանց նուրբական աղբիւրներն . Պառնասսո լեռն ունոցանուրբական էր՝ հանդերձ կաստալիոյ աշրերք, առ սասա մատուցեալ պատուարտք էին հեղմունք ջրոյ, մեղրի և կաթի : Բանաստեղծք յօգնութիւն կը կարգային զիրենք . այլ նա որ համարձակէր մրցիլ նոցա հետ՝ կը պատուհասուէր խստիւ . Պիերոսի ինն դստերք, որք ուզած էին ի վսեր գալ իրենց հետ, թուչնոց փոխակերպեցան, և Համբարուք (Sirènes), որք նոյն յանդըգնութիւնն ունեցան, կորուսին իրենց թւոց փետուրքն, զրոյ Մուսայք իւրացուցին :

15. ՆԵՐԻՒԴԱՅՔ, յիսնեակ զստերք Ներեսայ և Դորիսի, էին յաւերժահարսունք Միջերկրականի, մինչ Նայեադք էին Նիմֆայք անուշ ջրոյ և Ովկէանիդայք՝ Ովկէանու : Սոցա նշանաւորագոյններէն էր Թետիս, որ ամուսնացաւ Պելլոսի հետ և եղաւ մայր Աքիլեայ : Իւրեանց հօր հետ կը բնակին ծովուն խորոց մէջ, և նպաստաւոր են նաւարկուաց : Կը պաշտուէին Յունաստանի մէջ բազում տեղեր, այլ մանաւանդ նաւահանգստից մէջ : Արուեստագիտաց գործոց մէջ կը ներկայացուին սովորաբար իրրեւ գեղեցիկ աղջիկներ, այլ երբեմն քանդակեալ քարանց վրայ կը տեսնուին իրրեւ կէս աղջիկ կէս ձուկ :

16. ԳԱՆԻՄԵԴ, որդի Տրովսայ և Կալլիրօէի, և երբայր իլոսի և Ասսարակոսի, էր երիտասարդ անհամեմատ գեղեցկութեամբ . դիք զնա համբարձին յերկին որպէս զի նեկտար մատոււակէ Զեսի և ապրի ի մէջ անմահից : Ըստ ոմանց նոյն ինքն Զես արծուոյ կերպարանօք կամ ի ձեռն իւր արծուոյն զնա վերացուց, և Իդա լերան վրայ տեղի ունեցաւ այս յափշտակութիւն : Աստուածոց հայրն միիթարեց հրաշագեղ պատանւոյն հայրն նուրիելով նմա զոյգ մ'աստուածեղէն ձիոց : Աստեղագէտք դրին զայն իկարգի աստեղատականց Զրհոս (Աքարիոս) անուամբ :

17. ՀԵՐՄԻՍ, (Ունիքիւր ըստ Հուվլայեցուց), որդի Զեսի և Մայիս՝ դստեր

Ատլասայ, էր բանբեր և քարոզ դից, մանաւանդ Զեսի, նաև դիք պերճալիօսութեան, խոհեմութեան և հնարագիտութեան : Ծնաւ յԱրկադիա, Կիւլէն լերան վրայ քարայրի մը մէջ, աստի իւր յորջորջումն կիւլէնեան : Ծնանելէն քիչ յետոյ ցոյց տուաւ իւր բնական յօժորութիւնը որբանէն փախչելով և Ապողոնի եղներէն մի քանիները գողնալով : Ապողոն, թէ և գուշակութեամբ գտած էր զգողն և բողոք բարձած առ Արամազդ, այլ թոյլ տուաւ պահել նմա գողնն ու բարեկամացաւ նորա հետ՝ դիւթուելով այն քնարին ձայնէն զոր Հերմէս կը հարկանէր, ինքն իսկ հնարած ըլլալով զայն լարեր դնելով կրիսյի մը պատեանին վրայ : Հնարագիտութեան ոգին, որոյ անձնութումն էր, չէր մերժեր նենգն, երդմնացանցութիւնն ու գողոնն Զեղինակ կը համարուէր բազմաթիւ գիւտերու, ինչպէս, բացի քնարէն, սրնգի, այբուբենից, թուոց, երաժշտութեան, աստեղագիտութեան, մարմնամարզից, կոռուելու արուեստին, ձիթենեաց մշակութեան, չափուց և կշռոց և այլ բազում իրաց : Կը նկատուէր և Սատուած ձանալպահաց և պաշտպան ուղևորաց, նոյնալիս և դիք առեւտրոյ և բարեյաջողութեանց . իբրև զոհից հնարող, էր տպա և զոհելեաց խնամակալ և ըստ այսմ մատնաւորապէս պաշտելի հովուաց : Ամէն մարզարանք նորա պաշտպանութեան տակ էին, որպէս մարմնամարզական խաղք և մրցութիւնք Յունաց : Կը նկարուի իբրեւ երիտասարդ, ոյր անդամք մարմնական հըրահանգօք զարգացած են բարեյարմար ներդաշնակութեամբ :

18. ՀԵՄ («Eris յուն. Discordia լատ.») էր գիցուհի գժոտութեան, քոյր և սիրոզ Արէսի և իրր զնա ցանկացող խազմից պատերազմաց :

19. ՏԵ՛ս ի յառաջիկայն :



ԾԱՂԿԱՔԱՂ, ՀԱՏՈՒԱԾՔ

ՅՈՏԱՐԱՋԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ
Ն Ա Բ Ո Լ Է Ո Ն Բ .

Կորացեալք որպէս ձիոր ըգգայթէ գայ տէրն՝ Ասէին ցմիմեանս . «Ահա ծնանի մեծ ոմն. Պետութիւնն անսահման սպասէ ժառանգ վաղիւ : Զի՞նչ այն իցէ զոր Տէր ունի տալ առնս այսմիկ

Որ, քան ըգկացսըր մեծ, քան ըզչըռո՞ր
իսկ տւագ, ծըծէ ձըդէ ի բախտ իւր զազգի մարդկան
բախտ»։

Մինչ նորա խօսէին, ամպ պայծառ և խորին
ծելաւ, տեսաւ կանգուն ի վերայ աշխարհի
կանխասահմանեալ մարդն, և
եւ ապդք բերանաբաց լուս ևեթ մընացին,
Զի բարձեալ զերկոսին ձեւսն ընծայէր
երկրի

Նա մանուկ նորածին։
Եւ ինքըն, փըքացեալ գոռութեամբ քիթն
հզզօր։

Բաղուկը նորա երկու ցայնժամ կծկեալը ի
կուրծու։

Քակէին հուսկ ուրեմն։
Խսկ մանուկն, ապաստան ի ձեռուըն հայ-
րենիս,
Ողողեալ փայլակամբք ի բըրաց խարտեցից՝
Շողայր ի միջոցի։

Իրբեւ ետ տեսանել զիւրոյ գահուն ժա-
ռանդ
Ազգաց հընոց, որպէս և հինաւուրց թա-
գուց,
Խուճամեալ յառեալ զակն յոր ոք էր թա-
գաւոր։

Իրբեւ զարծուի ոլացեալ ի սար մի բարձ-
րաբերձ
Դոչեաց լի խնդութեամբ, և ձոխութեամբ
մեծաւ։

«Հանդերձեալն, հանդերձեալն, հան-
դերձեալն իմ է, իմ։»

Ո՛չ, չէ քո հանդերձեալն,
Աստուծոյ է այն, տէր։
Յո՛րժամ և ժամ հընչէ,
Բընաւք տան մեզ հրաժեշտ
Հանդերձեալն, ո՛վ խորհուրդ։
Ամենայն իրք երկրիս,
Փառք, յաջողուած զինուց,
Թագ ալայծառ արքայից,
Յաղթութիւն բոցաթեւ,
Տեհչք փառաց յաջողեալք,
Ի մեր վերայ հանդչին
Որպէս թուչուն ի յարկս։

Որչափ և բուռն է ոք, թէ՛ ծիծաղի, թէ՛
լոյ,
Ոչ զօրէ տալ խօսել քեզ, և ոչ տարաժամ
հզցուրտ քո ձեռն բանալ,
Ո՛վ յընորք համբ, ո՛վ մեր ուրուական,
ո՛վ հիւր մեր,

Խուճամ, որ դիմակաւ պնդիս միշտ ըզմեր
կնի,
Եւ զոր կոչեն վաղիւ։
Բա՛րէ, վաղիւ, է իրըն մեծ
Յորմէ վաղիւ լիցի եղեալ
Զալուոճաւըն մարդ այսօր ցանէ,
Հզզործն կստուած եփէ վաղիւ,
Վաղիւ փայլակն է յառագաստ,
Ամպ ի վերայ աստեղ է նա,
Մատնիչ ոմն է որ գայ ի յայտ,
Խոյ ի բախել է զաշտարակս,
Լուսուոր որ փոխէ զգօտի,
Բարիզ գնայ զիետ Բաբելոնի.
Վաղիւ, գահուն է եղեին.
Այսօր կերպաս է այն նորա,
Վաղիւ, է նըժոյգ ձի որ ըզգետնի փըր-
փըրեալ,
Վաղիւ, ո՛վ յաղթական, Մոսկուա է որ
վասի
Գիշերի որպէս ջահ։

Հին թիկնապահք են քո գիտավաստ ի
դաշտին.
Վաղիւ, է Վաթէրլու։ Վաղիւ, Սուրբ Հե-
ղինէ։

Վաղիւ, է գերեզման։
Ժամանակն Աստուծոյ, միջոցն է միայն քո,
Կարես դու յերկրի աստ ունել զամենայն
վայր։

Լեալ մեծ որչափ մարթի ճակատ մի ընդ-
երկնաւ,
Արքայ, կարես հանել, որպէս զիարդ կա-
միս,
Զեւրոպ ի Քարլմանէ, յայլազգեաց զԱսիս։
Ոչ նոյնպէս ըզվաղիւն յաւիտենականէն։
Ո՛վ աղէտ, ո՛վ խըրատ։ Մինչդեռ առնըս
մանուկ
Յորրոցի խաղալիկ առ ըզթագն Հըռոման։
Մինչ ագուցին նըմա անուն որ հար հըռ-
չակ։

Մինչ ճակատն արքունի ցուցաւ դողացելոյ,
Կրթելոյ ի զարմանս, ազգին ընդ այն թէ
էր
Հընար միանգամայն լինել և' մեծ և' փոքր.
Մինչ հայրըն շահեցաւ նըմա բազում ճա-
կատս,
Մինչ կուտեաց թանձրացոց պարիսպըս
կենդանիս
Շուրջ ըզնոր ծընելով որ ժպուր ի սընարս։
Մինչդեռ մեծն այն շինող, ճարտար յար-
կանել հիմն,

իր այն թէ տապարաւ յօրինեալ էր զաշ-
խարհ:

Բստ երազոյն զոր տես:

Մինչ հայրական ձեռամբ պատրաստեցան
բընաւք:

Տիեղծ մանկանն յօժիտ տալ յաւերժական
շուք:

Մինչ կենացն ասալորէզ եղաւ յասլահօվի.
Յառյապայ բնակութիւն տեառն այնմիկ
ժառանգի:

Արմենցան քաջ ի բաց ի խոր անդըր գետ-
նոյ

Կուճ ոտք ապարանից.

Մինչ յագուրդ ծարաւոց Փըրանկաց մա-
տուցաւ

Աման մի թաթազուն լցեալգինեաւ յուտոյ...
Զե ճաշակեալ նորա ըզթոյնըն զոսկեզօծ,
Մինչեւ մերձեցուցեալ ըզըթունս իւր ի
տաշտն,

Եկեալ խազախ մի հան ըզմանուկն ի գա-
ւակ,

Եւ տարաւ տոտնապաւ:

Այս, արծուին ըզցայդ կայր բաց թեւօք
յերկինս,

Մինչ հողմ ուժգին երեկ զերկոսին թեւս
նորա.

Արար նորա անկումն յօդս ահագին խրա-
դիմեցին անդէն բնաւք խնդիւք ի բոյն
նորա.

Անցնիւր ըստ ատամանցն հան իւր բաժին
յորսոյն.

Անգղիա առ զարծուին, և ըզձագն Աւըս-
տրիա.

Երկոքին մեռան: Տէ՛ր, ահեղ են վըձիւք քո.
Հոկիղբն արարեր նախ ի տեառնէն ան-
յաղթէ,

Յաշխարհակալ առնէն.

Ապա ի գլուխ հաներ զոսկրեղէնն յիշա-
տակ.

Տասն ամք բաւեցին քեզ ի նիւթել ըզպա-
տան

Հօրն և որդւոյ նորա:

Փառք, մանկութիւն, պանծանք, ի՛նչք
զոր տանի չիրիմ:

Մարդ կամէր ապաքէն թողուլ ինչ տո
դըրան,

Այլ մահ ասէ ցնա, Ոչ:

Անցնիւր տարըր դառնայ յո երթայն ամե-
նայն.

Օդ առնու յինքն ըզծուլս, և երկիր ըզմո-
խիր.

Մոռացութիւն՝ զանուն

Թարգ . Վիթյուր Հիհկոն

Ա. Մ. ԳԱՐԴԻԱՇԵԱՆ

ԱՃԱԿԵՐԸ ՇՆՈՐՀԱԿԱԼ

Յիշատակ քո ուրախ առնէ զիս յոյժ, և
զարթուցանէ յիս զհանոյս հնոյ բարեկամու-
թեան մերոյ: Երդ քո յուշ առնէ ինձ զա-
ւուրս երիտասարդութեան իմոյ, և ցան-
կամ յոյժ առնուլ ի միտ՝ թէ հի՞մ յիշատակ
անդիւտ կորստեան բարեաց ոչ առթէ ինձ
տիսրութիւն: Փօխանակ հաճոյից զոր զգամ,
թուրի ինձ թէ պարտ էր արտասուս արկա.
նել: Այլ չեւ ի քնին արկեալ թէ ուստի'
ազդումնդ այդ իցէ յիս՝ կամիս լինել կա-
թոգին զայնմանէ որ տայ ինձ ունել միտս
չնորհակալուս վասն երգոյն զոր նուիրեցեր
առ իս: Զիք քեզ երկմտել թէ չիցէ երդ
քո հաճոյ ինձ, զի անձնասէր բոյս բարուց
իմոյ բազում ինչ օդտի ի նմանէ, և զի
հոչակ հարկանի անդ զինէն ունել ազնուա-
գոյն միտս ի մերում ժամանակիս: Զի՞նչ և
էի երբեմն, և զի նչ և այժմս իցեմ, ոչ մո-
ռացոյց երբեք զծմարիս և զանխախուտ
բարեկամութիւն քո, և զամենայն աւուրս
կենաց իմոյ եղէց քեզ չնորհակալ որպէս ա-
զախին բազմաժամանակեաց ի խոնարհա-
գոյն աղախնայց քոց:

(Թարգ).

Յ. Գ.

ՀՅԵՒՑԾ

ՎՐԻՊԱԿՔ ԺԱ. ԹՈՒԽՈՅՆ ՄԷՋ

Էջ Սինակ Տող Վրիպակ	Ուտիդ
166 Ա. 19 ըցծ	յոյժ
166 Ա. 40 կը գտնենք	կը գտնը- ւինք
166 Բ. 28 գետնոց	գիտնոց
167 Բ. 42 զա՞յս	զո՞յս
167 Բ. 57 կը յանգի	յանգի
169 Բ. 23 ses pères et մերե	ses père et mère
174 Բ. 18 ծնողս	արս
176 Ա. 20 հի	խարհի
176 Ա. 27 րիցիս	րիցես

ԱՐՏՈՒՐԱՏԵՐ Ա. ՍԱՔՍՅԵԱՆ

Տնօրէն-Խմբագիր	ՏԻՀՀՐԱՆ ԱՍՔԱՆԱԶ
Կ. Պօլիս, Էսկի Զապրիէ նաստէսի, 61.	